

ՆԵՐՔԻՆ ԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՈՒԺԵՐՈՒՆ ԵՒ ՓՈՔԻ ՊԱՍԵՐՈՒ ՎԱՐՈՐԴՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ ԲԱՆՈՒՄՆԵՐ

Մազութով բանոց փոքր պասերու արգիլման դեմ բողոքի ցույցերը երկկ ապրեցան նոր վարչակազմում մը, երբ վարորդները բախում ունեցան ներքին ապահովութեան ուժերուն հետ:

Արդարեւ ներքին գործոց նախարարութեան եւ ներքին ապահովութեան ուժերու կողմէն ցուցումներէն էտք, ապահովութեան ուժերը հակակշիռի տակ պահեցին տարբեր շրջաններու մէջ ցույցերը եւ արգելք հանդիսացան ճամբաները փակելու փորձերուն, բացառութեամբ Շթորայի, ուր բախումներ արձանագրուեցան եւ ձերբակալութիւններ կատարուեցան:

Փոքր պասերու սեփականատէրերը եւ վարորդները երկկ կէսօրին Պապայեթէն ճամբայ էլան դէպի Շթորա, որուն հրապարակին վրայ կատարեցին բողոքի նստացոյց: Մննք իրենց պասերով՝ մօտաւորապէս հապար հատ, փակեցին հրապարակն ու շրջակայ ճամբաները:

Խաղաղ նստացոյցը վերածուեցաւ վարորդներուն եւ ներքին ապահովութեան ուժերուն միջեւ բախումներու, երբ վարորդները փակեցին մայրուղին եւ փորձեցին արգիլել այլ փոքր պասերու երթելու: Անոնք մէջ գտնուող քաղաքացիները բռնի ուժով դուրս բերելով:

Ն. Ա. Ուժերը փութացին հեռացնելու ճամբաները փակող պասերը, որոնց վարորդները սկսան քարկոծել ոստիկանները, որոնց օգնութեան հասան խոռվութիւններու դէմ ջոկատն ու բանակային ջոկատներ:

Քաղաքային պաշտպանութեան ուժերու հրշէջ կառքերու ջուրի խողովակներն ու բիրտը օգտագործուեցան ցրուելու համար ցուցարարները, որոնց հետ բախումները տեւեցին երկու ժամ, մինչեւ որ կարելի եղաւ ցրուել պանոնք եւ վերաբանալ ճամբան:

Ձերբակալուեցաւ 29 վարորդ եւ գրաւուեցան մայրուղին փակող 14 փոքր պասեր:

Կարգ մը լրատու աղբիւրներ ակնատեսներէ քաղելով իրենց տեղեկութիւնները, հաղորդեցին, որ խոռվութիւնները ծայր տուած են, երբ վարորդներ վիրար խոշտանգած են, գործադուր եւ ցոյց կատարելու, ճամբան փակելու եւ նման մազուցողական քայլերու կողմնակիցներուն եւ պանոնք մերժողներուն միջեւ բանավեճ մը:

Նոյն աղբիւրներուն համաձայն, վիրարուած է 17 հոգի, եւ նիւթական վնասներ կրած են պասեր եւ վաճառատուներ:

Այլ լրատու աղբիւրներ յայտնեցին, որ Ն. Ա. Ուժերու Պեքայի հրամանատար Վոր. Ալի Համ ապաներու հետ ժողով մը գումարած է եւ ցուցմունքներ տուած՝ խաղաղ եւ դրական վերաբերմունք ունենալու նստացոյց կատարողներ:

Շարք՝ էջ 3

ՃՈՐՃ ՊՈՒՇ ԿԸ ԽՈՍՏՈՎԱՆԻ, ՈՐ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐԸ ՅԱՌԱՋԻՄՈՒԹԻՒՆ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ԵՆ՝ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՎ



Պաղեստինցի երիտասարդներ կը խուզարկուին Արեւելեան Երուսաղէմի մէջ պատահած դէպքէն ետք

Միացեալ Նահանգներու նախագահ ձորձ Պուշ խոստովանեցաւ, որ պաղեստինցիները նկատելի յառաջդի-

մութիւն արձանագրած են՝ բարեկարգումներու ձեռնարկելով: Սակայն Պուշ չըսաւ, որ Իսրայէլի շու-

տով կոչ պիտի ուղղէ պաղեստինցիներէն շրջաններէն հեռանալու համար:

Շարք՝ էջ 10

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՀԱՐՑԵՐԸ՝ ՔՆԱՐԿՈՒՄԻ ԱՌԱՐԿԱՅ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան, ընկերակցութեամբ Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մալքիճեանի եւ փոխ քաղաքապետ Րաֆֆի Կէօզլոյանեանի, այցելեց վերաշինութեան եւ բարգաւաճման խորհուրդի նախագահին եւ փոխ նախագահին:

Հանդիպումին արձարծուեցան Պուրճ Համուտը յուզող հարցեր: Խօսուեցաւ էջրեթիէն Պուրճ Համուտ երկարող կամուրջին շինութիւնը արագացնելու անհրաժեշտութեան մասին: Քննարկուեցին առարկայ դարձան նաեւ Պուրճ Համուտի ենթակառոցի շինութեան աշխատանքները փութացնելու եւ շրջանին ծովեզրերին ապակառուցման արժատական լուծում բերելու կարելիութիւնները:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՔԱՆԱՏԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Հ. Յ. Դ. Լիբանանի Հայ Դատի մարմինէն պատուիրակութիւն մը երկկ այցելեց քանաքական ղեկավարուն եւ հանդիպում մը ունեցաւ ղեկավար Հայկ Մարաֆեանի հետ:

Պատուիրակութիւնը ղեկավարին շնորհակալութիւն յայտնեց Քանաքային Ծերակոյտին հայկապատ ուրոշումին համար՝ ակրնկալելով, որ այդ ուրոշումը մօտ օրէն կ'որդեգորի նաեւ քանաքական պետութեան կողմէ: Հայ Դատի մարմինը փոխանցեց ղեկավարին, թէ այս առնչութեամբ նամակներ յղած է Ծերակոյտին այն անդամներուն, որոնք վճարող դեր ունեցած էին բանաձեւի որդեգրման գործընթացին մէջ:

Դեսպանը խոստացաւ Հ. Յ. Դ. Հայ Դատի մարմինին շնորհակալական գիրը փոխանցել նաեւ Քանաքային արտաքին գործոց նախարարութեան:

Հանդիպումը առիթ մը եղաւ նաեւ ղեկավարին ներկայացնելու Հ. Յ. Դ. Լիբանանի Հայ Դատի մարմինին աշխատանքները:

Վերապէս պատուիրակութիւնը յարգողութիւն մաղեց ղեկավարին, Քանաքային արտաքին գործոց նախարարութեան կառոյցին ներս յառաջիկային ստանձնելիք իր պատասխանատուութեանց համար՝ տրուած ըլլալով, որ անոր Լիբանանի պաշտօնակալութեան շրջանը աւարտած է եւ Օգոստոսին կը մեկնի Օթարուա:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԷՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԻՐԱՆ ՊԵՏԻ ԱՅՅԵԼԷ

Եւրոպական Խորհրդարանէն հնգանդամ պատուիրակութիւն մը յառաջիկայ շաբաթ պիտի այցելէ Իրան՝ խորհրդարանական յարաբերութիւններուն պարկ տալու հեռանկարով:

ԻՐԱՆ լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ այցելութեան նպատակն է շինիչ երկխօսութիւն ունենալ իրանցի խորհրդարանականներու հետ: Եւրոպական պատուիրակութիւնը նաեւ պիտի արծարծէ մարդկային իրաւանց հարցեր եւ միջազգային տնտեսական ղեկավարութիւնը:

Կը նախատեսուի, որ եւրոպական պատուիրակութիւնը իրանեան խորհրդարանէն պատուիրակութիւն մը Պրիւքէլ եւ Սթրասպուրկ հրաւիրէ:

ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՅԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ. Յ. Դ. ԱՇԽԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՊԵՏԻ ՉՕՐԱԿՑԻ Ա. ՂՈՒԿԱՍԵԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԵԱՆ

Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահական յառաջիկայ ընտրութիւններուն Հ. Յ. Դ. պիտի զօրակցի ԼՂՀի այժմու նախագահ Արկաղի Ղուկասեանին:

Հ. Յ. Դ. Լեոնային Ղարաբաղի Կեդրոնական Կոմիտէի անդամ Ալիոշա Գաբրիէլեան յայտնեց, որ Հ. Յ. Դ. պիտի պաշտպանէ Արկաղի Ղուկասեանի թեկնածութիւնը, եւ թէ նախագահին հետ գործակցաբար երկրին մէջ

պիտի կատարուին բարեկարգումներ:

Գաբրիէլեան նաեւ ըսաւ, որ Ղուկասեանի վերընտրութեան պարագային, նախագահը պէտք է առիթ ընծայէ Հ. Դ. Ղարաբաղի Կենտրոնին աշխուժ դերակատարութիւն ունենալու Լեոնային Ղարաբաղի տնտեսութեան զարգացման աշխատանքներուն մէջ:

Նշեց, որ 11 Օգոստոսին կայանալիք Լեոնային Ղարաբաղի նախագահական ընտրու-

թիւններուն ցարդ ներկայացած են չորս թեկնածուներ՝ այժմու նախագահ Արկաղի Ղուկասեան, «Միասնութիւն» հասարակական քաղաքական կազմակերպութեան կողմէ՝ Գրիշա Աֆանասեան, Լեոնային Ղարաբաղի Ազգային Ժողովի նախկին նախագահ Արթուր Թովմասեան եւ «Քրիստոնեայ-Դեմոկրատական» կուսակցութեան ղեկավար Ալլէրք Ղարաբաղեան:

«ՁԵՐՔԱԼՕ» ԿԸ ՅՐԱՊԱՐԱԿԷ ՓԱՐԻՁԵԱՆ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐՈՒ «ՅԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԵՐԱԿԸ»

Ազրպէյճանական «Ձերքալօ» թերթը, վկայակոչելով լաւատեղեակ դիւանագիտական աղբիւր մը, կանխատեսած է, թէ Հայաստանի իշխանութիւնները մօտ օրէն պիտի հրապարակեն Լեոնային Ղարաբաղի տագնապին լուծման փարիզեան սկզբունքներու «հայկական տարբերակը»: «Կամ տեղեկութիւններու դիտումները արտահոսք պիտի կատարուի, եւ կամ երկրին նախարարը կամ արտաքին գործոց նախարարը պաշտօնական յայտարարութիւն պիտի կատարեն այս առնչութեամբ»: Նշած է թերթը: Ըստ «Ձերքալօ»-ի, նշուած դիւանագիտական աղբիւրին վկայութեամբ, փարիզեան սկզբունքներու «հայկական տարբերակը» հետեւեալն է.

1.- Լաշինի միջանցքը կը դրուի Հայաստանի ինքնիշխան վերահսկողութեան տակ:

2.- Ազրպէյճանի եւ Նախիջեւանի միջեւ փոխադրամիջոցներու անվտանգութիւնը ապահովելու համար, մինչեւ փոխադարձ վստահութեան միջոցառում հաստատուի, Մեղրիի միջանցքը կը դրուի միջազգային խաղաղապահ ուժերու եւ Հայաստանի միացեալ վերահսկողութեան տակ, իսկ փոխադարձ վստահութեան միջոցառում հաստատուիմէն ետք՝ ամբողջովին Հայաստանի վերահսկողութեան տակ: Միջանցքներու կարգավիճակներու տարբերութեան պատճառով այն է, որ հայկական կողմը ունի այն մտահոգութիւնը, թէ Ազրպէյճան կրնայ որեւէ ստան փակել Լաշինի միջանցքը, մինչ թէ Հայաստան փակէ Մեղրիի միջանցքը, ապա Նախիջեւանը կը գտնուի այն վիճակին մէջ, որուն մէջ է այսօր արդէն:

3. Լեոնային Ղարաբաղը գործնականօրէն կը ստանայ կարգավիճակը, որ նախատեսուած էր ընդհանուր պետութեան առաջարկով, սակայն առանց օգտագործելու այդ անուանումը: Ղարաբաղը կը ստանայ ինքնուրոյն արտաքին եւ ներքին քաղաքականութիւն վարելու եւ ինքնապաշտպանութեան ուժեր պահելու իրաւունք: Շուրջի կարգավիճակը եւ զաղթականներու վերադարձի պայմանները կը քննուին անջատաբար:

4. Ղարաբաղի տագնապի լուծման մասին քաղաքական համաձայնագրի ստորագրումէն ետք կը սկսի հայկական ուժերու փոխ առ փոխ նահանջը ազրպէյճանական զրաւեալ շրջաններէ:

ԿՐԱՆՈՐԱՐՄԵՅՔԻ ԴԵՊԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

ՌՈՒՍԻՈՅ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՆԷ

Կիրակի գիշեր Ռուսիոյ Կրասնոսարմէյսք քաղաքին հայ բնակիչները ենթարկուած էին վայրակութեանց եւ խոշտանգումի: Քաղաքին մօտ 45 ուս բնակիչներ Շաբաթ գիշեր հայրու մը եւ ուսի մը միջեւ պատահած վեճին հաշուեյարդարը կատարելու համար խուժած էին հայերու բնակարաններ, խոշտանգած էին հայեր եւ պատճառած էին նիւթական վնասներ: Մօտ 15 հայեր փոխադրուած էին հիւանդանոց:

Այս դէպքերուն առնչութեամբ Ռուսիոյ մէջ Հայաստանի ղեկավարութիւնը հրապարակած է յայտարարութիւն մը, ուր նշած է. «Ռուսիոյ մէջ Հայաստանի ղեկավարութեան մամլոյ ծառայութիւնը մտահոգութիւն կը յայտնէ Կրասնոսարմէյսք քաղաքին մէջ հայ քաղաքացիներուն



Քոչարեան կ'ընդունի Վ. Ծուրմըրը

յին Ղարաբաղի տագնապին լուծման գործընթացին ներկայ իրավիճակը: Ան վերահաստատեց տագնապը խաղաղ միջոցներով լուծելու հայկական կողմին հաստատակամութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԱՂՊԵՅՃԱՆ՝ «ՍԻԱՍԱԿԱՆ ԵՐԿՈՒՐՆԵԱԿՆԵՐ...»

Եւրոպական Խոր-

Շարք՝ էջ 3

Շարք՝ էջ 10

ՆԱԽԱԳԱԸ ԼԱՐՈՒՄ ՆԵՐԿԱՅ ԳՏՆՈՒԵՑԱՒ ՄԱՐՈՆԻՆԵՐՈՒ ԼԻԿԱՅԻ ԸԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 50ԱՄԵԱԿԻ ԸԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ

Նախագահ զոր. Էմիլ Լաճուտ երէկ Պէջբէքի մէջ ներկայ գտնուեցաւ Մարոնիներու Լիկայի Հիմնադրութեան յիսնամեակին: Ներկայ էին նաեւ ընդհանրապէս պետական պաշտօնատարներ, կրօնաւորներ եւ գինուորականներ:

Մարոնիներու Պութրոս Սքէյր պատրիարքը եւ Ս. Լիկայի նախագահ Հարէս Ծեհեպ շնորհակալութիւն յայտնեցին նախագահին, որ ներկայ գտնուեցաւ Լիկայի Հիմնադրութեան առիթով կատարուած կրօնական յատուկ արարողութեան եւ վեր առին անոր դերը՝ երկրին բարոյութեան եւ ազգային ապահովութեան ու միասնակամութեան մէջ:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Հանրապետութեան նախագահը երէկ նախագահական պալատին մէջ ընդունեց տեղեկատուութեան նախարար Ղազի Արիսին, որուն հետ արծարծեց երկրին մէջ տիրող քաղաքական վիճակը եւ զարգացումները, ինչպէս նաեւ շրջանային հարցեր:

Նախագահ Լաճուտի այցելեց բարեխիղճ կարգադրութիւնը՝ շէյխ Լուսամէտտին Քարաքիրայի նախագահութեամբ եւ նախկին երեսփոխան Ատնան Թրապուլսիի ընկերակցութեամբ:

Հանդիպումին քննարկուեցան շրջանային եւ տե-

ղական հարցեր: Շէյխ Քարաքիրայ յայտնեց, որ պատերազմութիւնը իր զօրակցութիւնը յայտնած է նախագահ Լաճուտի կեցուածքներուն եւ վստահեցուցած, որ իր բոլոր լիբանանցիներ միշտ ալ նեցուկ կը կանգնին նախագահ Լաճուտի որդեգրած ազգային եւ միջազգային գծերին: Վրայ շինել որոշումներուն եւ ծրագրերին:

«Նախագահ Լաճուտի վստահեցուցիչը ազգային միասնակամութեան կարեւորութիւնը եւ լիբանանցիներու համախմբումը ազգային հաստատութիւններու շուրջ, որ միակ միջոցն է դիմադրելու բոլոր վտանգներուն, որոնք երկրին խաղաղութեան եւ անկախութեան կը սպառնան», նշեց շէյխ Քարաքիրայ: Նախագահ Լաճուտ ընդունեց Պէյրութի փաստաբաններու սենտիքայի նախագահ Աբմոն Շտիտը, որուն հետ քննարկեց երկիրը յուզող կարգ մը հարցեր, ինչպէս՝ ազատ արձեւտի տուրքերու հարցին լուծումը, կարգ մը օրէնքներու փոփոխութիւն՝ արդարութեան նպատակով, հարկահաւաք՝ հիմնուած տրամաբանական շահերու, եւ ոչ թէ ներկայիս ճշդուած երեսնական զուտարներու վրայ:

Շտիտ նախագահ Լաճուտի փոխանցեց նաեւ փաստաբաններուն փափաքը՝ դատաստան ընտրելու զործրնից արագացնելու առնչութեամբ:

Դատական հարցերու շրջափակին ներս Շտիտ մաղթեց, որ դատական նշանակումները արագ ձեւով կը յայտարարուին, որովհետեւ իրենց դրական ազդեցութիւնը կ'ունենան կարգ մը դատարաններու վրայ, որոնց աշխատանքը դադրած է:

Շտիտ նկատել տուաւ, որ սենտիքայի նոր կեդրոնատեղիի բացման հանդիսութեան առիթով (յառաջիկայ Հոկտեմբերին) Պէյրութի փաստաբանները կը փափաքին, որ նախագահ Լաճուտ ներկայ գտնուի: Նախագահ Լաճուտի հիերը եղաւ նաեւ Լիբանանի մէջ եունիսէֆի ներկայացուցիչ Արամ Պէրպրայի: Ներկայ էր նաեւ նախագահութեան ընկերային եւ տնտեսական հարցերու ընդհանուր տնօրէն Էյի Ասաֆ:

Պէրպրտին նախագահ Լաճուտի փոխանցեց մէկուկէս ամիս առաջ ՄԱԿի կեդրոնատեղիին մէջ (Նեւեորը) տեղի ունեցած մանուկներու յատկացուած խորհրդաժողովին արդիւնքները եւ որոշումները՝ շէյտելով այն որոշումը, որ նախագահներուն կը պարտադրէ տէր կանգնել լուրջ հարցեր դիմագրաւող մանուկներուն:

Պէրպրտին դրուատեց Լիբանանի Առաջին տիկին Անտրէ Լաճուտի կողմէ յատկացուած օժանդակութիւններն ու ի գործ դրուած ճիգերը՝ մանուկներու հոգնարարութեան նպատակով:

Նախագահ Լաճուտ ընդունեց Մեքսիկոյի Կեդրոնական Դրամատան փոխ կառավարիչ, ծագումով լիբանանցի Խոսէ Սալտանի, որ կը գտնուի Լիբանան մասնակցելու համար դրամատուներու շուրջ խորհրդաժողովի մը:

Հանդիպումին քննարկուեցան տնտեսութեան եւ երեսնուորէր անշուտ ընդհանուր հարցեր: Սալտանի նախագահ Լաճուտի ներկայացուց Մեքսիկոյի որդեգրած մեքսիկոյնը՝ դուրս գալու համար 90ական թուականներուն իր դիմագրաւած տնտեսական տագնապին:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

«Ձուարթնոց» կեդրոնի ամառային համոզման առիթով եղած են հետեւեալ նուիրատուութիւնները. Պարոն Ռապի Պոլոսեան 100 \$, տըր եւ տիկին Զաւեն Գաբիպեան 50 \$, տըր եւ տիկին Զակար Տէր Ստեփանեան 20 \$, ազգային մը 100,000 Լ.Ն., Ս. Գեորգ եկեղեցւոյ տիկնանց միութիւն 100,000 Լ.Ն., տիկին Զոհիլ Կոտալազեան 100,000 Լ.Ն., Պատաճեան ընտանիք 100,000 Լ.Ն., Ռուսիալեան եղբայր 50,000 Լ.Ն., տըր եւ տիկին Մարի Տեմիդեան 50,000 Լ.Ն., Պապայեան ընտանիք 20,000 Լ.Ն., օրհորդ Արմիւն Ամատունի 20,000 Լ.Ն.:

ՏԱՐԵԴԱՐՁԻ ԼԱՒԱԳՈՅՆ ՆՈՒԵՐԸ

ԱՅՍ ԱՄԻՍ ԱՍՏՈՒԿ ԳԻՆ ԲՈՒՈՐ ԱՍՏՈՒԿ ՍԿՈՒՂ ԱՆՈՒՆԵՐՈՒՆ. ԿԵՍ ԺԱՄՆՈՑ VIDEՕ CLIPՆԵՐ ԱՆՁԻՆ ԱՆՈՒՆՈՎ, ՄԱԿԱՆՈՒՆՈՎ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆԿԱՐՆԵՐՈՎ

Դիմել՝ ԱՐԱ ԲԵՔԵՏԵԱՆ ՇԱՍՏ. ԸՆ. 01 / 261696, 03 / 250518

30ԱՄԵԱԿԻ ԿԿԱՆՎԱԿԱՆՍ ԲԱՃԻՄԱՆ ԸԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

POLYGLOT TECHNICAL COLLEGE

Շուրջապատուութեամբ եւ ներկայութեամբ՝ ԱՊՏԷԼ ՌԱՆԻՍ ՄԸՐԱՏԻ (Կրթական եւ բարձրագոյն ուսմանց նախարար) Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 12 Յուլիս 2002, ժամը 8:00ին, Ռապիա քաղաքի մէջ, Ռապիա:

Մուտք՝ հրաւիրատոնով

ՅԱՆՕԹ: Յետ վկայականաց բաշխման հանդիսին՝ ջոբթիլ:

365 ՕՐԵՐԷՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ

Սոյն ձեռնարկին տըր եւ տիկին ժաբ եւ Արտաբլեքի իրենց ծնողաց ծննդեան տարեդարձին առիթով կը ստանան 29 Յուլիս Եւրամոնի ճաշի ծախսը՝ 300 տոլար:

ՖԻՆԻՒԼԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԵՐԿԱՐԱՉԳՄԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ Է

Արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտ երէկ յայտարարեց, որ հարաւի մէջ գործող ՄԱԿի խաղաղարար ուժերու կեցութիւնը Օգոստոսի սկիզբին վէց ամիս երկարաձգելու լիբանանեան դիմումը պատրաստուած է եւ պիտի լըուի ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի:

Համմուտ յայտնեց, որ դիմումը կը հաստատէ կարելութիւնը ոչ միայն Ֆինիլի կեցութեան, այլ նաեւ անոր վիճակներուն թիւին անփոփոխ պահպանումին, որովհետեւ տիրող պայմաններուն մէջ այդ ուժերուն թիւը անհրաժեշտ է, որպէսզի անոնք ամբողջացնեն իրենց առաքելութիւնը՝ շրջանին մէջ խաղաղութիւն ու ապահովութեան ամրապնդումը, այն պահուն, երբ պաղեստինեան շրջաններէն ներս վտանգաւոր իրադարձութիւնները անհրաժեշտ կը դարձնեն, որ Ֆինիլի թիւը նուա-

յուս չկրէ:

«Սաղաղութեան արաքական նախաձեռնութեան հետապնդման արաք արտաքին գործոց նախարարներու յանձնարարութեան ժողովը պիտի գումարէ յառաջիկայ Ուրբաթ օր Գահիրէի մէջ: Օրակարգի միակ կէտն է վերահաստատումը, թէ արաքները կառչած են նախաձեռնութեան, որուն շուրջ համախոհութիւն գոյացուցած են, եւ որ կը մնայ խաղաղութեան լաւագոյն հիմը», ըսաւ ան:

Համմուտ նաեւ ըսաւ, որ նոյն օրը Գահիրէի մէջ գումարուող արաքական վեհաժողովի որոշումներու հետապնդման նախարարական յանձնարարութեան պիտի քննարկէ պաղեստինեան շրջաններէն ներս տիրող վիճակն ու պաղեստինցի ժողովուրդին ու անոր իշխանութեան օգնելու միջոցները, իրաքի եւ Քուէյթի միջեւ հարցերն ու Լիբանանի հետ յօրակցութիւնը:

ՄԻՐՆԱ ՄԸՐԻ ԴԻՄՈՒՄԻՆ ԿԵՐԱԲԵՐԵԱԼ՝ ԹԵՐ ՈՒ ԴԵՍ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Մեքսիկոյի մասնակի երեսփոխանական ընտրութեանց արդիւնքները չեղելէ համարելու թեկնածու Միքելա Մըրի կողմէ Մահմանադրական Խորհուրդին յղուած դիմումին առընդէպէս յայտարարութեամբ յայտարարուիլով զարգացնելու առնչութեամբ:

Իրաւաբան Էտմոն Նայիմ հաստատեց, որ ընտրութիւններուն արդիւնքը բեկանելու բարար օրինակեան հիմք կայ, նկատելով անոնց ծայրերուն չնշնջման տարբերութիւնը եւ դիմումին մէջ անհամաձայնութիւններ, որոնք կարող են արդիւնքը բեկանելու համար զարգացնելու առնչութեամբ:

Քիմը բեկանելու դիմումը լեցուն է սուտերով եւ անպակոյմ գրագրով ու շփոթի մատնող այնպիսի տեղեկութիւններով, որոնց մէջ ճշմարտութեան մշտն քայլ չէ կայ, ըսաւ Ն. Լահուտ: Եւ կոչ ուղղեց վերջ դնելու Լիբանանի հանրային կարծիքը գրգռող ընթացքին, որովհետեւ Լիբանանցի ժողովուրդը շատ լաւ գիտէ թէ ո՞ր անձնակցանքը քիմային գրագրով ստիպեց համար կը մղէ ճակատամարտը:

«Ամենաճշտ է, որ անոնք ընդունին ժողովուրդին կամքը, եւ այս հարցը պետք է փակուի արդիւնքի յայտարարութեամբ օրը. բայց միշտ հիմա կը շարունակուի ժողովուրդի վճռած արդիւնքը փոխելու փորձերը», ըսաւ ան:


Կապրիէլ Մըր յայտարարեց, որ երկանման դիմումը ունի քաղաքական բնոյթ, եւ անոր ետին կան տեղա-

կան եւ ոչ տեղական նկատառումներ:

«Դիմումը լեցուն է սուտերով», ըսաւ Կապրիէլ Մըր՝ հաւաստելով, որ «այս օրը Լիբանանցի ժողովուրդը չի ընտրուի պարսկական ղեկավարութեամբ Լիբանանը»:

Կապրիէլ Մըր խօսեցաւ ընտրութիւններուն ընթացքին մեքսիկոյնը գործոց նախարարին գործած օրինակագրութիւններուն մասին, եւ մաղթեց, որ «դատարան իշխանութիւնը չշահագործէ» փոխելու մեքսիկոյն կամքին արտայայտութիւնը, որ պահանջեց վերջ դնել անոնց, գործելու ձեւին:

«Մահմանադրական Խորհուրդին որոշումը չի փոխել իմ կեցուածքս քաղաքացիներուն եւ սուրիական ներկայութեան առընդէպէս», ըսաւ Կապրիէլ Մըր:



ASHJIAN TOURS

Առաքին անգամ ըլլալով արագընթաց նաւով 190 վայրկեանէ կ'որհու ՅՐ. Ա. կարգի պանգոյն նախաձառումով - 118\$

4 օրը 140\$ - 7 օրը 192 \$Ամէն Երեքշաբթի եւ Ուրբաթ օրերը

8 օր CALYPSO գրասանով, Կիպրոս, Ռոստոս, Աթենք եւ Յունական կղզիներ, ժողովուրդը ձիւ, լման ձաշերով եւ ամէն գիշեր տարբեր խախտմանը

Հայաստան 9 Օգոստոս - 15 օրը 780\$, 22 Օգոստոս - 15 օրը 800\$, իսկ մէկ շաբաթ 525\$

VARNA մէկ շաբաթ 285\$, երկու շաբաթ 385 \$

Ամէն օր մեր գրասենեակին առջեւն առաւել երկոյ շքեղ օթըրարներով Դամասկոս միայն 6,000 Լ. Նսկի - Հայկ 10,000 Լ. Ն., առաջնակարգ հիւրասիրութիւն

Ամէն Կիրակի Դամասկոս-Սլոնայա - Պիտան միայն 13\$ Կանա, Սալոա, Սուր 8\$ - Տարալոս, ժաբա 8\$

ԱՇՃԵԱՆ ԹՈՒՐՁ ԻԵՆ. 01-261177, 240654 03-233978, գիշերը 01-258887 Amitours Tel. 01-898226 եւ 03-292600

ՄԱՋԱՉԴ

Տիկին Սոնիա Խանգէթեան Աւետիս Անճէրեան եւ ընտանիք Տէր եւ տիկին Պերճ Թուրսարգիսեան Տիկին Աստիէ Դապրո Տէր եւ տիկին Ֆրետերիք Անպոպ Սերժ Թուրսարգիսեան եւ ընտանիք Հայր Ժան Անճէրեան Ժողէֆ Անճէրեան եւ ընտանիք Անճէրեան ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր եւ հարազատին՝

ԺԱՔՈՊ ՍԵՖԵՐԵԱՆԻ

ժահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 9 Յուլիս 2002ին: Յուղարկուութեան արարողութիւնը պիտի կատարուի յասօր՝ Չորեքշաբթի, 10 Յուլիսին, կէսօրէ ետք ժամը 4:00ին, Ս. Եղիա եկեղեցւոյ մէջ, ուր կ'ենթադրուին մարմինը պիտի փոխադրուի հայ կաթողիկէներու գերեզմանատուն, Շեկրոյէի խաչմերուկ:

- Սերկայս ընդունիլ իբրեւ մահապարտ:
- Յաւակցութիւններ կ'ընդունուին յուղարկուրութեան ատշա, եկեղեցւոյ արահին մէջ կէսօրէ ետք ժամը 1:00ին սկստել, եւ Հինգշաբթի 11 եւ Ուրբաթ 12 Յուլիսին, Ս. Եղիա եկեղեցւոյ արահին մէջ առաւօտեան ժամը 11:00ին երեկոյեան ժամը 7:00:

ԱՋՊԱՅԻՆ ԵՂԻԸԸ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԲՈՒԸԸ
2002 - 2003 ՏԱՐԵՇՐՋԱՆ
ա. ԺՄՄՆԱԿԱՅՈՅՅ
- Մինչեւ Յուլիս 31 անձնակազմը ամենօրեայ - բացի Չարաթն - ներկայութիւն եւ վարձարանէն ներս: ՕՊՆՍՍՍՍՍ ամուսնու ընթացքին գրասենեակները բաց են ԵՐԵՎԱՆԻՍ օրերը, ժամը 8:00էն 12:00: - Երկուշաբթի, 2 Սեպտեմբերէն սկստել անձնակազմը ամենօրեայ ներկայութիւն եւ վարձարանէն ներս:

բ. ՄԸՐԱՆՈՒԹԻՒՆԵՐ
Վարձարանի ԲՈՒՈՐ աշակերտները ԱՆԻՏԻՐ ինչպէս նաեւ նոր դիմում կատարողները, պետք է արձանագրուած ըլլան՝ ընդունուելու համար դասարան:

ՈՒՆԻ ԱՆՈՒԿԵՐՍ ԻՆՔՆԱՐԵՐԱԲԱՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԱԾ ԶԻ ՆԿԱՏՈՒԻՐ

1.- Նորեկ աշակերտները պետք է ներկայացնեն անձնաթուղթի լուսագրանձ, նախկին վարձարանէ պետական փոխանցագիր, վիճակացոյց եւ բարի վարուց վկայագիր, առողջական վիճակին մասին վաւերացուած եւ 3 լուսանկար:
2.- ՄԱՆԿԱՍՍՈՒՐ կ'ընդունուին 2 ամսու - 2 տարեկան 6 ամսու փոքրիկներ:
- ԲՈՒՈՐ դասարան կ'ընդունուին 2 տարեկան ետք ամսու փոքրիկներ:

գ. ՎԵՐԱԶՆՈՒԹԻՒՆԵՐ
Երկուշաբթի, 16 Սեպտեմբեր՝ ԼԵՂՈՒՆԵՐ Երեքշաբթի, 17 Սեպտեմբեր՝ ԹՈՒՄԱՍՆՈՒԹԻՒՆ - ՈՒՍՈՂՈՒԹԻՒՆ:
Չորեքշաբթի, 18 Սեպտեմբեր՝ ԱՅՐ ՆԻԹԵՐ:
ԵՒՆՕԹ. Քննութիւնները կը սկսին ժամը 8:00ին:
ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԿՈՒՁՈՒԻ
• Ուկրէյներ (սեպտեմբեր) եւ աղամանաղաշարներ (գիրքեր): ԸՆ. 01 - 890951:

ՀԱՄԱՉԳԱՅԻՆ «ՀԱՄՕ ՕՉԱՆՋԱՆԵԱՆ» ՄԵՍՆԱՃԵՒՂ
ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
Տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 12 Յուլիս 2002 երեկոյեան ժամը 8:00ին, «Անի» ակումբին մէջ:
ԵՒՆՕԹ. ժամը 8:30ին ներկայանալու թիւը մեծամասնութիւն պիտի համարուի:
ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

Knabaz-Orient Plus Travel & Tourism
Varna Starting from 350\$
Including R/T ticket, 8 days bungalow, transfers, guides, visa & taxes not included
Cyprus 3 days 185 \$ Boat trip to Cyprus & Greece 380 \$
01-900598, 901-598 - 03-258336, 256254 www.orientplus.com

ԱՐԱՄ Ա. ԸՆԴՈՒՆԵՑ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ Ս. ԱԲԸԸ ԵՒ Յ. ԶՂԵՅՊԸ

Արամ Ա. կաթողիկոս երկվորյակ Պիքֆայայի վանքին մէջ ընդունեց բանաստեղծներ Սայիտ Աբըրը և Հանրի Զղէյալը:

Շուրջ ժամ մը տեւող հանդիպման ընթացքին խօսակցութիւնները առաւելաբար կեդրոնացան մշակութային հարցերու շուրջ և հայկական և իրանական մշակութային միջեւ յարաբերութիւններ ու գործակցութիւն յառաջացրելու կարելիութիւններուն մասին:

Յայտնենք, որ վեհափառ հայրապետին նախաձեռնութեամբ յանձնարարուած ընթացքին երկխօսութիւն մը տեղի պիտի ունենայ հայ և իրանացի մտաւորականներու միջեւ՝ նուիրուած մշակութային հարցերու:

Ն. ՊԸՐՐԻԻ ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երկվորյակ ընկերային հարցերու նախարար Ասատ Տիապը, և երեսփոխաններ Ժան Օպէյտն ու Նապէմ Խուրին:

Երեսփոխան Ուսմիի Պարիսի Աքքարէն ժողովրդային պատուիրակութեան մը ընկերակցութեամբ այցելեց Պըրրիի, որուն ներկայացուց շրջանին կարիքները:

Պըրրի երկվորյակ ընդունեց Յոյն կաթողիկէներու Արժանթիսի առաջնորդ Ժորժ Հատատտ եպիսկոպոսը:

Ֆրանսայի խորհրդարանի նախագահ Ժան Լուի Տիապը Պըրրիի յղած իր հեռագիրին մէջ յայտնեց, որ մեծ կարեւորութիւն կ'ընծայէ Ֆրանսայի և Իրանի միջև ինչպէս նաեւ միւս ֆրանսախօս երկիրներու խորհրդարաններուն միջեւ բարեկամութեան և գործակցութեան ամրապնդումին:

Ան Փարիս այցելելու հրաւեր ուղղեց Պըրրիի: Խորհրդարանի նախագահը նաեւ ստացաւ Ահուտական Արաբիոյ գաղտնի սպասարկութեանց պետ իշխան Նաուաֆ պըն Ապտէլ Ապի-պէն հեռագիր մը, ուր նա շնորհակալութիւն կը յայտնէ Իրանի իր կեցութեան ընթացքին իր գտած հոգածութեան համար:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ...

Շարունակուած Ա. ԷջԸ

Հանգիստանայ հայ եւ ազգերի ժողովուրդներուն հաշմանցման խորհրդանիշ, ինչպէս Սթրասպուրկը Եւրոպայի պարագային»: Վալթէր Երուսիմըրի կարծիքով, Լեռնային Ղարաբաղն ու Նախիջևանը, ինչպէս նաեւ Հայաստանն ու Ազրպէյճանը իրարու կապուած են իբր «սիւնակալ երկուորեակներ», որոնք ոչ մէկ այլ ընտրանք ունին, բացի՝ եւրոպական ընդհանուր ընտանիքին կազմէն ներս խաղաղ և հաշտ պարելէ: Ան նչեց, թէ ներկայիս հրատապ է անդրսահմանային համագործակցութեան խնդիրներու շուրջ Հայաստանի, Թուրքիոյ և Ազրպէյճանի միջև երկխօսութեան հաստատումը: Ան աւելցուց, թէ Թուրքիոյ և Ազրպէյճանի իշխանութիւններուն յանձնարարած է ընդունելի այս ուղղութեամբ Հայաստանի առաջարկները:

ԱՅԼ ԸՆԴՈՒՆՆԵՐ

Վալթէր Երուսիմըր նաեւ այցելեց Ազգային ժողով եւ հանգիստան ունեցած խորհրդարանի ղեկավարութեան հետ: Խորհրդարանի նախագահ Արմէն Նաչատրեան Երուսիմըրի ներկայացուց Հայաստանի մէջ կատարուող բարեփոխումներու ընթացքը: Ան անդրադարձաւ տարբեր բնագաւառներէ ներս նոր օրէնքներու եւ օրէնսդրութեան որդեգրման: Երուսիմըր գոհունակութիւն յայտնեց Հայաստանի ստանձնած պարտաւորութիւններու կատարման ընթացքին առնչութեամբ նշելով, որ ակնյայտօրէն Հայաստան Եւրոպական խորհուրդին անդամակցած է ամբողջ հողով, եւ ոչ թէ քաղաքական նկատառումներով: Երուսիմըր նաեւ տեսակցեցաւ խորհրդարանի խմբակցութիւններուն ղեկավարներուն հետ:

Եւրոպական խորհուրդին ընդհանուր քարտուղարը նաեւ այցելեց Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի: Երուսիմըր նախարար Օսկանեանի հետ եւս քննարկեց Հայաստանի ստանձնած պարտաւորութիւններու կատարման ընթացքը, կարգ մը մարզերէ ներս որոշ ուղղութիւններու պատճառները, մասնաւորապէս ինչպէս ու սահմանադրական բարեփոխումներու գործընթացը: Անոնք նաեւ արձարձեցին Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծման գործընթացը եւ դրացի երկիրներու, ներառեալ՝ Թուրքիոյ հետ Հայաստանի յարաբերութիւններու իրավիճակը: Երուսիմըր գոհունակութիւն յայտնեց Հայաստանի մէջ իր նկատած յառաջխաղացքին առնչութեամբ:

ՆԵՐՔԻՆ ԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՈՒԺԵՐՈՒՆ ԵՒ ՓՈՔՐ ՊԱՍԵՐՈՒ...

Շարունակուած Ա. ԷջԸ

րուն հետ, բայց անցորդներուն հանդէպ վարորդներէն ոմանց բնութիւնները պատճառ դարձած են բախումներուն:

Չահրանիի մէջ եւս վարորդները փորձեցին փակել Սուր, Նապարիէ և Մարձա-Մարձա արգելի գիւղերը, յայտնող գիւղացիները ճամբաները, բայց Ն. Ա. Ուսմիը արգելք հանդիսացան անոնց: Սայտայի մէջ վարորդները խմբակցան Անուալի կամուրջ տանող ճամբուն երկու կողմերը՝ խաղաղօրէն արտայայտելով իրենց բողոքը:

Ն. Ա. ՈՒՇԵՐՈՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Երեկոյեան, Ներքին Ապահովութեան Ուսմիը ընդհանուր տնօրէնութիւնը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ մազութով բանող փոքր պատերու սեփականատէրերը պոռնաբանութեան դէմ՝ պատճառելով ճամբաները փակելու իրենց փորձերը:

Հաղորդագրութեան մէջ ըստ, որ սեփականատէրերու խմբով մը կը փակէ մայրաքաղաքին և արուարձաններուն մէջ ճամբաներ, բողոքելու մարտնչութեամբ իրենց փորձերը արգելելու օրէնքի գործադրութեան դէմ՝ պատճառելով երթելու խնդիր, որ վնաս կը հասցնէ քաղաքացիներուն, ինչպէս նաեւ պոստաշրջութեան՝ խախտելով ընդհանուր կարգն ու կանոնը:

«Ներքին գործոց նախարարութիւնը հասկացողութեամբ կ'ակնկալէ վարորդներուն և սեփականատէրերուն պահանջները, որոնք կը պաշտպանեն իրենց օրական կարգը, բայց անոնց մէջ կը պահանջէ, որ դադարէն ճամբաները փակելու և նեղութիւն պատճառելէ քաղաքացիներուն, որոնք անմեղ ըլլալով հանդերձ կը վճարեն անոնց բողոքին գինը», նշեց հաղորդագրութիւնը:

ԱՅԼ ԸՐԶԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Փոքր պատերու վարորդներ երկվորյակ ընկերային հարցեր պիտի ներկայացուին Վարչապետին և նախարարին:

Պապիպէրի մէջ աւելի քան 500 վարորդներ նստացող կատարեցին քաղաքի հարաւային մուտքին, ապա քաղաքին միջև և Տուրիս, ուր կատարեցին երկրորդ նստացողը:

Թրիփոլիի մէջ վարորդներ ցոյց կատարեցին, ապա քանի մը վայրկեան փակեցին

տնտեսական բոլոր երեսները»:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՄՅԵՅՐԻ

Մազութով բանող փոքր պատերու սեփականատէրերու պատկերակրութիւնը մը երկվորյակ ընկերային Պուրոս Սֆէյր պատրիարքին, որուն ներկայացուց վարորդներուն և սեփականատէրերուն պահանջները:

Սֆէյր պատրիարքը յայտնեց անոնց վիճակին համար՝ հաստատելով, որ ներստանում մազութով մասակար է, բայց այս հարցը լուծելի է, «իսկ անհասկանալի այն է, թէ ինչպէ՞ս կարելի է արտօնել մազութով բանող մեծ օթոպիւսները, եւ փոքր օթոպիւսները արգիլել: Արդարութիւնը հաւասարութիւն կ'ենթադրէ, իսկ երբ անհասարարութիւն ըլլայ, արդար գահազատի առիթ կու տայ», ըսաւ նա:

Սֆէյր ըսաւ, որ այս հարցը պիտի արժարժէ պատկան կողմերուն հետ և յոյս յայտնեց, որ անոնք կ'ընդհատուին և լուծուի կը գտնեն անոր:

ՄԱՐՈՒՆ ՏԱՐԵՍ ՍՕՏ


Փոքր պատերու վարորդներու սենտիքային նախագահ Ապտալիս Համատէի գլխաւորութեամբ, պատուիրակութիւն մը երկվորյակ ընկերային իրաւանց հարցերու յանձնարարութեան Մարտի Ֆարիսի, որուն ներկայացուց վարորդներուն դժգոհութեան պատճառներն ու պահանջը:

Համատէ պահանջեց հաւասարութիւն և արգիլում մազութով բանող բոլոր օթոպիւսներուն, եւ կամ «մաքրու» մազութի ներստանում:

Տարէս ըսաւ, որ անհրաժեշտ է մաքրու պահել կենսոլորտը՝ ժողովուրդի առողջութիւնն ու պոստաշրջութիւնը պահպանելու համար:

«Պետութիւնը օրէնք փոխելով վնաս կը հասցնէ վարորդներուն եւ պարտաւոր է հատուցումներ վճարել, կամ ալ «մաքրու» մազութ ներստանում, ըսաւ երեսփոխանը:

ԼՈՂԱՆՔԻ ԶԵՐ ՄՍԸՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՓԱՐԱՏԵՅԷՔ



SHOWER CABINE CENTER

Այլազան մոտելներ, պատրաստ եւ ապագարձի վրայ: Չափազանց չափերով կազմուած, ալիմիցիոն և փափսքի U. P. V. C. եւ ապակի նկարով: Կառուցուած է լոգանքի յատուկ խցիկներու համար Bac a Douche et Baignoire: Մատչելի գին, տեղադրելը՝ ձրի, երաշխաւորուած աշխատանք:

Դիմել՝ ԹԱՂԵՆՍԵՍԱՅԵԱՆ Ընտանաբնակարան, Սիտ Էլ Պաւլոյի, Բալիկ Զաման պողոտայ, հեռ. 03-392088, 03-476018:

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDE ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիվին:



«ԲԱԳԻՆ» ՁՄԵՌ 2002



անոր ստեղծագործած գրականությունը: «Սփիւռքահայ գրող ոչ թէ ինքզինքն այրեցուց, այլ այրեցուց հայ գրականութիւնը» մէջըրբերով պատասխան կը տրուէ հայրենի կարգ մը գրողներու, որոնք գրող նկատուած էին ստալինեան օրերուն...

Համարի «Լոյս տեսան» բաժինով կը կարողանա շատու հասանալ բանաստեղծական աշխարհին մը մասին, «Քանստ» տեղիքով, մտածողը, մարդը՝ վերնագիրով, զոր կազմած է Շ. Դանիէլեան:

Գրիգոր Պըլտեանի տարի մը առաջ լոյս ընծայած ֆրանսերէն հատորին՝ «Յիսուս տարի գրականութիւն Յրանս»-ի մէջ՝ աշխատասիրութեան կ'առաջադառնա «Յրանս Արմէնի» մասնագիտութիւնը, որուն կ'արձագանգէ նաեւ «Բագին»: Գ. Պըլտեան երկար տարիներ տրամադրած է այս հատորով լոյսին բերելու 1920ական թուականներէն մինչեւ 1970ական թուականներուն Յրանսայի մէջ ստեղծագործած 70 գրողներուն ներգրումը:

Մշակութային լուրերուն մէջ կը կարդանք Լորն Շիրինեանի նոր գիրքը՝ Յիսուսայանութեան նուիրուած: Հայ յազգի համբաւ տիրացած երգչուհի Հելեն Սեկարյի մասին տեղեկացնող գիրքներ տրուած են յայտնի Շարլ Ազնաւուրի հետ կը գործակցի երգի ասպարէզին մէջ:

Համարի վերջին էջերուն կը կարդանք վերջերս մահացած մտաւորական իւր ժամանակակից գրող Ա. Պ.

Վ. Մատթէոսեանի խորունկ թափանցումները կոստան Զարեանի կեանքին ու գրականութեան՝ հոնկէ քաղցրով նոր տըրեւելներ Զարեանի գրականութեան եւ կապեալուն շուրջ:

Մտտեանագէտ Կարօ Արքայանեան իր հետեւողական հետազոտութիւնները կը շարունակէ մասնաւորաբար պոլսահայ գրականութեան դաշտին մէջ: Ան գրասէր ընթերցողին ներկայացուցած է շահեկան ուսումնասիրութիւնները յուն հրատարակչատան գործունէութեան մասին, ու այս անգամ մեզի կը ծանօթացնէ «Արսա» հրատարակչատան գործունէութիւնը, ուր լոյս տեսած են հարիւրաւոր հայերէն թէ թրքերէն գիրքեր: Ան կը ներկայացնէ սլոյսահայ գրողներու գործերուն թրքերէնի թարգմանութիւնը: Այս աշխատասիրութիւնը կարօ Արքայանեանի պատրաստած է, սակայն, գիտական մտեցումով, որ կորուստէ եւ մոռացումէ կը փրկէ որոշ աշխատանք մը՝ իրագործը՝ Իրբե «Ահագին մարդ մը...» կը ներկայացուի:

Մարալ Փանոսեանի հարցազրոյցը կը կարճայրենի գիտական գեղարվեստի համարով՝ գեղարվեստի մասին: 8 զանկարուհի Ռոզմարը Միսնեանի հետ կատարուած է: Նշենք, որ «Բագին»ի 40ամեակի համարին կողքին նկարը գործն է գեղարվեստի մասին: Մարալ Փանոսեանի: «Նշմաններ» բաժինով խմբագրութիւնը անդրազգային է «Խոհ»-ին մասին: Բանաստեղծը իր կարգին լուրջ քննարկման ենթարկած է Յ. Օշականի տեսակետները «Արեւելահայ գրականութիւնը եւ Յ. Օշական» խորագրով իր աշխատասիրութեամբ:

Վարդան Մատթէոսեան գրած է «Պոլիսը եւ արդէն» Կոստան Զարեանի ծանր հարցը՝ յիշատակող: Նույնանուն տեսակետները «Արեւելահայ գրականութիւնը եւ Յ. Օշական» խորագրով իր աշխատասիրութեամբ: Վարդան Մատթէոսեան գրած է «Պոլիսը եւ արդէն» Կոստան Զարեանի ծանր հարցը՝ յիշատակող: Նույնանուն տեսակետները «Արեւելահայ գրականութիւնը եւ Յ. Օշական» խորագրով իր աշխատասիրութեամբ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԻՆՈՐՍՏԻԿԵԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷՂԻ

ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍ



Կիրակի, 16 Յունիսի երեկոյան ժամը 19:00ին, Ծաղկածորի դաշտին վրայ տեղի ունեցաւ Համազգայինի Ինստիտուտի մանկապարտէզի ամսական հանդէսը:

Հանդէսին մանկապարտէզի շրջանաւարտ աշակերտները պատրաստած էին գեղարուեստական յայտագիր մը, որմէ ետք խօսք առաւ Համազգայինի Մե. Զ. Արսլանեան ձեռնարանի գործադիր տնօրէն Տիգրան Ժինպաշեան: Ապա, մանկապարտէզի պատկերասրահի հիմամբ մանկապարտէզի ղեկավարները յայտագրեցին շրջանաւարտներուն:

Այս տարի Համազգայինի Ինստիտուտի մանկապարտէզի շրջանաւարտներն էին:

Աղասարգիսեան Նարե, Ալյնթապլեան Նանոր, Գաթաբեան Մեթանի, Գամպուրեան Ալիք, Գաւտահրեան Ալիք, Գապասաբլեան Լարա, Գլընեան Վանի, Զոհրապեան Լուրի, Էքմէրեան Լիլնոտ, Թալուրեան Դալար, Թերեան Ծիլա, Թոքաբլեան Ռիթա, Խորրարեան Նարոտ, Կարապետեան Թաթևա, Կեօվէնեան Մարիան, Ղազարեան Մարիան, Մեքրուպեան Մեղրի, Մեքրուպեան Սեֆեանի, Մուսփեղեան Նեմսի, Նաբարեան Նանոր, Ուրիշեան Դալար, Չիլիկիբեան Տեսիլ, Պաղտասարեան Նանոր, Պայրատարեան Սիմօն, Պարտումեան Կարին, Պերթիլեան Կասիա, Պուշպեան Արին, Սալորեան Միքիլ, Սամուէլեան Սերիլ, Սերայտարեան Լուր, Սիւփիլիբեան Սարին - Մարի, Տէր Պետրոսեան Շահիկ, Փոլատեան Նեմսի, Քեչեհեան Սեֆեանի, Քերտուլեան Օսան, Քեօֆեհեան Նաթալի, Արքահամեան Արամ, Արսլանեան Արա, Գապասարեան Գոգօ, Գարամիցեան Լարա, Գարամարգարեան Ռոստոմ, Գլընեան Վարանդ, Զեքեան Ժաք, Թիքիբեան Յարութ, Լոզոյեան Ռաֆֆի, Խաթի Կիրակոսեան Յարութ, Կետիկեան Ռաֆֆի, Կիտանեան Սերուժ, Զանոնեան Սերուժ, Զեքեանեան Արամ, Միսիրեան Յակոբ, Նաբարեան Նարեկ, Զապլեան Յարութ - Յովիկ, Տեմիրեան Սազօ, Տէրուցեան Տանք, Տիշչեքեան Սերժ - Սազօ, Փափագեան Գուրգէն եւ Փելիբեքեան Տանք:

ՀԱՅ ՄԸ՝ ԷՎԵՐԷՍԹԻ ԳԱԳԱԹԻՆ

Հայաստանցի իկոր ինտրովեան յաջողած է բարձրանալ Էվերէսթ լեռան գագաթը: Հայաստանի լեռնագնացութեան ազգային ֆետերասիոնի նախագահ Հայկ Տոնոյեան հաղորդած է, թէ ներկայիս Միացեալ Նահանգներու Նիւ Զորզի քաղաքին մէջ բնակող իկոր ինտրովեան իր հանդիսանալ երկրորդ յաջող, որ յաջողած է մագլցիլ աշխարհի ամենէն բարձր լեռը: 1999ին Լե. Սարգիսով մեծ յաջողութեամբ կրցած է մագլցիլ լեռը, իսկ այս տարուան 20 Մարտին իկոր ինտրովեան սկսած է իր երթը դէպի Էվերէսթի բարձունքը եւ 20 Մայիսին հասած է լեռան գագաթը:

ՀԱՅ - ՅՈՒՆԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՆ ՆԵՐՈՒՔՆԱՐԿՈՒՄ

Հայաստանի նախագահին առընթեր ազգային անվտանգութեան խորհուրդի քարտուղար եւ Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան 3 Յունիսին տեսակցութիւն մը ունեցած է Հայաստանի մէջ Յունաստանի նոր նշանակուած դեսպան Անթոնիոս Վլախանոսի հետ՝ դիւանագիտական գործունէութիւնը սկսելուն առիթով:

Հանդիպման ընթացքին քննարկուած են զինուորական համագործակցութեան մարզին մէջ տեղի ունենալիք հետագայ աշխատանքները եւ խնդիրները, ինչպէս նաեւ շրջանին մէջ երկուստեք հետաքրքրութիւն ներկայացնող հարցեր: Քննարկուած են նաեւ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման ընթացքը եւ հեռանկարները:

ՈՍԿԵԱՅ ՄՐՅԱՆԱԿ՝ ՀԱՅ ԵՐԳԻՉԻՆ

Պարիթոն Սուրէն Շահիջանեան դասական ձայնապանակներու փարիզեան ալիքեմիային կողմէ պարգեւատրուած է «Ոսկեայ Որփէն» մրցանակով, իր «Չալոփուրիի ոտմանները» ձայնապանակին համար: Ս. Շահիջանեանի հետ նոյն մրցանակին արժանացած են աշխարհահռչակ երաժիշտներ, ինչպէս՝ Փիեռ Պուլեզկ, Զեյնիլա Պարթուի, Անն - Սոֆի Մուլէր եւ ուրիշներ: Հայ երաժիշտը երեւանցի է, 32 տարեկան:

ՇԱՅԵՐԵՆԸ՝ ԻԱ. ՂԱՐՈՒ ՄԵՐ ՄԵԾԱԳՈՅՆ ՍԱՐՏԱՆՐԱԲԵՐԸ

ՄԵՆՔ ԵՒ ՄԵՐ ԼԵՁՈՒՆ՝ ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՆՍԱՓՈՐՁԻ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

ԻՆՉՈՒՄ ՄՍԱՀՈՊՈՒԻԼ ԱՐԵՒՄՍԱՀԱՅ ՄԵՎՈՅԹՈՎ

Այս հարցէն ընդհանրապէս կը խուսափինք՝ տարբեր պատճառներով: Օր մը պէտք է խօսիլ այդ մասին՝ վերաբերումներու յատկազման համար: Մնալով խորագիրին պատասխանելու սահմանին մէջ՝ փորձենք պատասխանել, առանց ամբողջական ըլլալու յաւակնութեան:

Մեր պատմութեան հոլովոյթը մեզի պարտադրած է, որ աստիճանաբար զարգացնենք երկու գրական աշխարհարար լեզուներ: Անոնք, երկուքն ալ, ճկուն են, շնորհալի, եթէ յարգուին անոնց կանոնները, շարահիւստութիւնը եւ մանաւանդ եթէ չհաղճատենք մեր բառային հարստութիւնը՝ հիւանդագին կապիտալներով: Մեր ինքնազնու գանձն է մեր լեզուն, եւ մենք մեզ առջնորդած ենք խորտակման, ամէն անգամ որ հեռացած ենք անկէ: Հակառակ պատմութեան վկայութեան, անմիջական հետաքննութեամբ, մենք մեզ տարած ենք խորտակման՝ եւ կը շարունակենք ընթանալ այդ ուղիով: Մեր քաղաքական եւ տնտեսական ղեկավարութիւնը մանաւանդ լեզուի պաշտպանութեամբ չի զբաղիր, զայն կը համարէ հողորդակցելու մեքենական պարզ գործիք: Միտին Զաւարեան կ'ըսէր, թէ այլ ժողովուրդներու մէջ քաղքենի դասակարգը կ'առաջնորդէ ազգային ինքնապաշտպանութիւնը եւ ազատագրութիւնը, հայերու մէջ ան կ'արգելալէ: Արեւելահայերէնի ընթացքը ի դարուս եղած է տարբեր արեւմտահայերէնի ընթացքէն: Հայաստանի մէջ տիրող քաղաքական-գաղափարաբանական պայմանները կրնային աղճատել, բայց ժամանակ պէտք է իր հողին վրայ ժողովուրդի լեզուն անհետացնելու համար:

Արեւմտահայաստանի բուն գրականութիւնը եւ ամասացումէն ետ տարագիր զանգուածները իրենց հետ տարին իրենց լեզուին, եւ ընդհանրապէս՝ իրենց մշակոյթը: Առանց պետական նեցուկի, տարտղնումի պայմաններուն մէջ, յանդիսանալ պահալ լեզուն, զայն սորվեցնել յամառութեամբ, եւ այդ լեզուով ստեղծուած է նաեւ գրականութիւնը: Միտմանակ, այդ լեզուով մշակուած գրականութիւնը ժառանգելով, անոնք դրոշմուեցան միջնորդումով մը, որ Բոնգարաւուած Հայաստանն է, յուշ դարձած գիւղը, քաղաքը, ու խտանագնացութեան վանքը: Անցեալ մը, որուն յաւերժացման միտումը դարձան ազգային գաղափարախօսութեան քաղցրեցուցիչ մաս: Սփիւռքի առաջին սերունդը, նոր ծնողները եւ մանուկ հասակին հայրենի գործն պոկուածները՝ Միտմանակ, Զարդարեան, Վարուժան, Մշոյ Գեղամ, Յակոբ Պարոնեան, Երուսիման կարողութիւնով կ'առաջարկէին իրենց հետ: Այդ գրականութեան դրոշմը աստիճանաբար վերածուեցաւ քաղաքական միտքի, քանի որ անով կը փոխանցուէր նաեւ յափշտակուած հայրենիքի գաղափարը, հայրենիք, որուն տէր կը զգային իրենք զիրենք: Հայրենասիրութիւնը եւ ազգային քաղաքականութիւնը անհող եւ անհորիզոն մտքի մարզանքներ էին: Այդ սերունդները բնական կերպով կ'ապրէին հայրենի գիւղ կամ քաղաք վերադառնալու ցանկութիւնը, կիրքը: Շատեր յաջողեցան պահպանել շարունակականութիւնը, բայց ժամանակակից եւ հետաւորութիւնները պարտադրեցին իրենց աւերը: Հայրենասիրական ճառն գուրգահեռ, Սփիւռքի արտայայտութեան սկսանք մաս կազմել բառեր, զորս մեքենի կամ ստանդարտի երբեք չէին գործածած. այլասերում, ձուլում, աւելի վերջ, մեր օրերուն, կէս հայ, քառորդ հայ, երբեմն կը հասնին հոն, ուր հայը իր ազգը կը դիտէ դիմացի մայրիկն եւ կը գառնայ հայասէր:

Ներգաղթ-արտագաղթ ընկերատնտեսական երեւոյթը, ըսենք՝ ակամայ, կ'ապակայրուցնէ դասական Սփիւռքը: Արտագաղթողները, արեւելահայերէնով արտայայտուող եւ այդ լեզուով ստեղծուած մշակոյթով աւելի թրծուած, աւելի ամուր, դասական Սփիւռքին աստիճանաբար կը պարտադրեն արագ հոլովոյթ, մանաւանդ աշխարհագրական այն շրջաններուն մէջ, ուր գոյութիւն չունին մշակութային կրթական ամուր կառուցներ, կամ ուր նորեր կը հասնին զանգուածային կերպով եւ կ'ապրին այնպէս, որ կարծէք Երեւանի մէջ թաղամասէն միւսը փոխադրուած են: Մինչեւ ե՛րբ: Հարց է: Բայց որոշ է, որ կամուար մեկնումը կ'ենթադրէ նաեւ խզում: Դասական Սփիւռքը գոյացողները գիտէին եւ գիտեն, որ իրենք չեն ընտրած իրենց գոյվիճակը, այդ պարտադրուած է իրենց, ինչ որ կ'արթնցնէ իրաւունք հետապնդելու գիտակցութիւնը, որ գուցարուելով լեզուի եւ մշակոյթի վրայ՝ կը դառնայ պատենչ ուժացման դէմ:

Այս տուեալներէն մեկնելով՝ կ'ուզեմ զերակացնել, որ Սփիւռքի, դասական եւ համարենք անոր վրայ գուցարուող նոր Սփիւռքի, գոյատեւան էական ազդակներ են ընդհանրապէս հայերէնի պաշտպանութիւնը, ի հարկէ, բայց մանաւանդ արեւմտահայերէնի, անով մշակուած եւ մշակուելիք գրականութիւնը: Բարդ կացութիւն: Բարդ հարցերուն անմիջական եւ թեթեւամիտ գործնապաշտ լուծումներ փնտնելու մեզ կ'առաջնորդէ փակուղի:

Փակուղի, որուն ցուցանակին վրայ կը գրենք... Ի դէպ, ի՞նչ պէտք է գրել:

ՅԱՎՈՒ ՊԱՆԵՆ

(Շար. 7)

«ԱԶԳԱԿ»-ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ «ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն: 258526, 260115 եւ 241274:

VALSE International Cosmetics



Armen Haroutinian & Co. DORA • Magie Al-Hajj Str. • Tel: 01-265449 Fax: 01-324617 - P.O.Box: 90-150 Beirut-Lebanon

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ...

Շարունակում՝ 5րդ էջէն

ցած կ'ըլլանք, եթէ ըսենք, թէ ոչ մէկ բանուոր այս...

ապահովել ետք միայն, ու կը թելագրէ յաւելնալ...

Յանձնախումբը դասարանի մը աշակերտներուն...

Կենդանի օրինակ մը. անցած շաբաթ ազգային...

Բացառապէս, որ բարեկամացի է բարեխիղճ աշ...

Մինչ այդ մանկավարժական այս մտահոգու...

ՓՈՒՍՏՈՒ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԶԲՕՍԱՇՐՁՈՒԹԻՒՆ

ՀՈՒՖԻ ՄԱՅՐԻՆԵՐՈՒ ԱՆՏԱՌԸ



Հուֆի մայրիներու անտառն անկիւն մը

Սկզբնական շրջանին գաղափարը խորթ...

550 հեկտար տարածութիւն ունեցող էր Պարուր...

1994ին բնութեան պաշտպաններու...

Րաձքի: Նոյն տարին, ՄԱԿի Բարգաւաճման Ծրագրի...

Հուֆի անտառը կը մնայ ընտանեկան, դպրոցական...

ՍԱԿԱՐԱՆ

Պէտքով սակարանին մէջ օտար դրամահիշներու...

Table with 2 columns: Item name and Price. Includes items like 'Սուրիական թղթակի' and 'Քուրթան տինար'.

Table with 2 columns: Item name and Price. Includes items like 'Մեկ օնս սակի' and 'Մեկ օնս արծաթ'.

Table with 2 columns: Item name and Price. Includes items like 'ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱՇՆԵԹՈՒՂԹԵՐ'.

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5191

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

11x11 grid for the crossword puzzle.

ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ ՈՒՂԱԿԱՅԵՑ

Table with 2 columns: Clue and Answer. Includes clues like '1. Ժագ Թակոբեանի երկերէն'.

ԹԻՒ 5190

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

11x11 grid for the crossword puzzle.

ՏԻՆՆԻ ԿՐԱՆԻ ԱՍՏՂԵՐԸ

Չեր ընտանիքին կարգ մը անդամներուն միջեւ...

Չեր գործին վերաբերել տեղափոխութիւնները...

Լաւ լուր մը պիտի ստանաք նիւթական հարցերու...

Յաջողութիւն բառը այսօրու գլխաւոր ուրախութիւնը...

Վերջերս նոր բարեկամութիւններ ունեցած էք ար...

Ուր որ ալ երբքք այսօր, նամբորդութեան մէջ ըլլաք...

Ունիք այն տպաւորութիւնը, թէ ձեր կեանքը կ'ընթաց...

Չեր սիրային կամ ամուսնական կեանքին մէջ վերջին...

Պիտի վերագտնէք ձեր եռանդը, քիչ մը եւս մարգանք...

Չեր սիրային կամ ամուսնական կեանքին մէջ վերջին...

Չեր սիրային կամ ամուսնական կեանքին մէջ վերջին...

Չեր սիրային կամ ամուսնական կեանքին մէջ վերջին...

Չեր սիրային կամ ամուսնական կեանքին մէջ վերջին...




Չեր սիրային կամ ամուսնական կեանքին մէջ վերջին...

ՀԵՌԱՍԵՍԻԼ

Table of TV and radio programs with columns for time, channel, and program name.

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՇԽԱՐԿ



ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ՝ ՖՈՒԹԳՈՒԼԻ ԱՇԽԱՐՀԵՆ



Ժուրնալիստներ (կտրուկ)

ՖՐԱՆՍՍՅԱԻ միջազգային նախկին մարզիկ Ֆլորիան Մորիս երեկ միացավ Պարիզի, մեկ տարուան պայմանագրով մը ստորագրելով անոր հետ, յայտնեցին ֆրանսական ակումբին պատասխանատուները:

28 տարեկան Մորիսը, 1998ին Փարիզ Սեն Ժերմենին միացած էր Մարսեյի, սակայն անցելով եղանակին, ան փոխ տրուել էր Նեյմի ֆուտբոլի ակումբին, որի ակումբին միջոցով Սենտ-Էթիենին տեղափոխվել էր: Սենտ-Էթիենը, թե Պարիսի կապակցում միացուց նաև Ռեննին 30 տարեկան միջնապահ ժուրնալիստը, որ երկու տարուան պայմանագրով մը ստորագրեց իր նոր կապակցի հետ: Երկուսին պարագային ալ փոխանցման գումարներուն մասին ոչինչ յայտարարուեցան:

● **ՌԵԼՍ ԱՍՍԻԵՏՍԻՆ** շուէտացի բերդապահ Մարիուս Սաֆեր իր ակումբը լքելով վերադարձավ հայրենիք եւ միացավ Ա. դասակարգի Մայնրտին, չորսուկէ տարուան պայմանագրով մը ստորագրելով անոր հետ:

28 տարեկան Սաֆերը, որ երկու անգամ կրած է Եվրոպայի ազգային խումբին շապիկը, անցելով եղանակին իր ակումբին կողմէ փոխ տրուած էր Պեդրեյրաշի:

● **ՊԱՐԻՍԵԼՆԱ** երեկ ամբողջացուց արժանաբան միջնապահ իտուան Ռոման Ռիբուկի իր կապակցի փոխանցումը, որ բառ ստորագրուած համաձայնագրի կնքումէն մի քանի օր անց եղանակ մաս պիտի կապուէ պայմանական կապակցով:

Պարիսէլան անոր փոխանցման գումարին կէսէն քսուելին (5.94 միլիոն տոլար) պիտի վճարէ Պոքա Ճուինորի, մինչ մնացելու գումարը (4.95 միլիոն տոլար) պիտի վճարէ երկու եղանակի ընթացքին:

Ակումբին նախագահը՝ իտուան Կասալար, անոր փոխանցումէն անմիջապէս ետք յայտարարեց, թէ հակառակ իր կապակցի միանալով, ան առաջին իսկ եղանակին փոխ պիտի տրուի ալ կապակցի մը, որովհետեւ Պարիս արդէն իսկ իր կապակցի ներուին ոչ երոպացի մարզիկներ, այլ ինքն առաւելագուց իր արտօնութիւն է Սպանիոյ ֆուտբոլի ֆետերասիոնին կողմէ:

Պարիսէլան իր մարզիչ Լուիս Վան Կասալ, կամ պիտի ձերբազատի իր ոչ երոպացի մարզիկներէն մէկէն, կամ 24 տարեկան արժանաբանին անժամաբար փոխ պիտի տայ ալ իտուան մը, իտուան այդ չորս ոչ երոպացի մարզիկներն են, արժանաբան իտալիէ Սալիսի եւ պրաչիւիցիներ՝ Ռիվալտո, Ճիլիանի եւ Ֆապիո Ռոքսեմպէ:

Հակառակ անոր, որ Ռիբուկի իր մասնակցութեամբ չէր բերել 2002ի Մոնտիալին, սակայն ան կը մնայ իր երկրին լաւագույն ֆուտբոլիստներէն մէկը:

Ֆերմանացի բերդապահ Ռուպեր Էնքէն ետք (փոխանցուած Պենֆիլդայնէ), ան կը դառնայ երկրորդ մարզիկը, որ 2001 - 2002 եղանակի ասարտէն ետք կը միանայ Պարիսէլային:

ՄԻՏԵԼԳՈՐՈՅԻ պատասխանատուները երեկ յայտնեցին, թէ այժմ մեծ աշխատանքի լծուած են եւ ոչ մէկ ճիգ կը խնային երրորդ անգամ ըլլալով իրենց կապակցի միացնելու համար պրաչիւիցի ժուրնալիստին, որ ձափուի է Հարաւային Քոնգոյ մէջ տեղի ունեցած 2002ի Մոնտիալին, իր երկրին ֆուտբոլի ազգային խումբին հետ հասնողիստ աշխատի պիտի տրուի:

Անգլիական կապակցի պատասխանատուներէն Քէյթ Լէմպ յայտնեց, թէ իր կապակց արդէն իսկ ճշմարտ է անոր փոխանցման գումարը եւ գրեթէ համաձայնութեան եկած անոր ակումբին՝ Աթլետիկ Վաշինգթոնի հետ: Կը մնան միայն կարգ մը մանրամասնութիւններ, որոնք լուծուի ձամբու մէջ են:

29 տարեկան փլայնթրոպի միացուելու 1995ին, որմէ երկու տարի ետք փոխանցուեցաւ Աթլետիկ Վաշինգթոնին: Ան Սեպտեմբեր 1999ին վերադարձաւ կրեց պարտադրել խումբին շապիկը, նախքան պրաչիւիցիական երկու խումբերու՝ Վաշինգթոնի Կամպօնի ֆուտբոլի ակումբին:

Անոր փոխանցման համար իր վճարելիք գումարին մասին Միտլայնքը թէ չի յայտարարեց, սակայն անիկա իր պարտաւարականութիւնը յայտնեց (անցելու շարք) Էմիլիոյ յարաբանակալ Մարիուս Մարիոսին փոխանցման համար իտալական խումբին վճարել 12.5 միլիոն տոլար:

ՊԱՅԵԼՆ ՄԻԻՆԻՆՆՆՆ այժմ կապակցուեցան մէջ է Ռուսիայի հետ, անոր ծախելու համար իր յառաջապահներին Քարպուս Եանքըրը: Անիկա ետքըրը ծախու համար է, որովհետեւ Պոնտրուիլիայի 2001 - 2002 եղանակին ան չկրցաւ ինքնիք պարտադրել խումբին հիմնական խումբին մաս կապուելու համար:

Ալգորութով, Պայէրն Միլինին 27 տարեկան յառաջապահ Եանքըրի փոխանցման համար կը պահանջէ շուրջ 8 միլիոն տոլար: Սակայն անիկա այդ գումարէն անչի ուսուց ալ պատրաստ է ընդունելու, եթէ յարմար առաջարկ մը ներկայանայ Եանքըրի, նկատի ունենալով, որ անոր պայմանագրով իր ներկայիտ հետ կ'ուարտի Յունիս 2003ին:

2002ի Մոնտիալին, Եանքըրը նշանակեց միայն մեկ կոլ, ալ ու Սէլուական Արաբիոյ դէմ տեղի ունեցած մրցումին (8 - 0):

ՖՐԱՆՍՍՅԱԻ ՀԵԾԵԼԱՐՇԱԽԻ ՇՐՋԱՎԱԶԲ

ԱՄՍՐԱԼԻԱՅԻ ՌՈՊԻ ՄԱՔԻՎՐԵ ՇԱՐՇՏԱՒ ՅՐԴ ՇԱՆՊՐՈՒԱԼԸ

Ֆրանսայի հեծելարշավի շրջավազին 3րդ հանգրուանը, որ տեղի ունեցավ երեկ՝ Մէսէն Ռէմ (174,5 քմ.), վերջ գտաւ ւատարիցիացի ախոյեան Ռոպի Մաքիվրի յաղթանակով, որ սփրիւթով գերազանցել էր իր մրցակիցները, հասաւ ժամանման գիծ՝ արվայրկեան 4 ժամ 13 վայրկեան եւ 37 երկվայրկեան արդիւնք մը: Լոթոյի հեծելանւորը, որ երեք տարի առաջ Փարիզի մէջ շահած էր նոյն այս շրջավազին վերջին հանգրուանը, պարտութեան մատնել էր զերմանացի Էրիք Յապըլը եւ իր ազգակիցը՝ Պէյտրը Քուրը, յաջողեցաւ իր յաղթանակը կերտել աշխարհի շամփանիքի մայրաղաքին մէջ:



Ռոպի Մաքիվրը, որ կը հասնի ժամանման գիծ

Այսօր տեղի կ'ունենայ 4րդ հանգրուանը՝ ըլլալ ժամացոյցի դէմ Էփերնէն Շարթ-Թիւլլարի մրցումը:

Ստորեւ՝ 3րդ հանգրուանին արդիւնքները.

- 1.- Ռոպի Մաքիվրը (Աւստրալիա) Լոթօ Արեքօ 4 ժամ 13' 37"
- 2.- Էրիք Յապըլ (Գերմանիա) Տէօթ Թելեքոմ (տոյնը)
- 3.- Պէտրը Քուր (Աւստրալիա) Ֆէ. Տէ. ժէօ (տոյնը)
- 4.- Անտրէ Հաուսիմը (Սլովենիա) Թաքնի (տոյնը)
- 5.- Ֆապիօ Պալաթօ (Իտալիա) Ֆասսա Պորթոլո (տոյնը)

Ընդհանուր դասաւորում.

- 1.- Էրիք Յապըլ (Գերմանիա) Տէօթ Թելեքոմ 13 ժամ 31' 35"
- 2.- Ռոպի Մաքիվրը (Աւստրալիա) Լոթօ Արեքօ 8" ուշ
- 3.- Ռուպէս Պերթոլիի (Չուիլի) Լամփրէ Տայքին 14" ուշ
- 4.- Լորան Ժալապէր (Ֆրանսա) Մի. Էս. Մի. Թիլպալի 17" ուշ
- 5.- Լէնս Արմսթրոնկ (Մ. Ն.) Եու. Էս. Փոսթալ (տոյնը)
- 6.- Ռեմոնտա Ռոմա (Լիթւանիա) Լամփրէ Տայքին 20" ուշ
- 7.- Սանթիաքօ Պոքերօ (Քուրմալիա) Քէլմէ 21" ուշ
- 8.- Տէյվիտ Միլըր (Բրիտանիա) Քոֆիտիս 22" ուշ
- 9.- Լորան Պոքշար (Ֆրանսա) Ժան Տըլաթուր 23" ուշ
- 10.- Օսքար Ֆրէյթ (Սպանիա) Մափէյ 25" ու

Ստորեւ՝ կ'ետեւնու դասաւորումը.

- 1.- Էրիք Յապըլ (Գերմանիա) Տէօթ Թելեքոմ 96 կէտ
- 2.- Ռոպի Մաքիվրը (Աւստրալիա) Լոթօ-Արեքօ 91 կէտ
- 3.- Օսքար Ֆրէյթ (Սպանիա) Մափէյ - Քուր Սթէփ 71 կէտ
- 4.- Սթիւրթ Օկրէյտի (Աւստրալիա) Քրետի Ակրիթոյ 56 կէտ
- 5.- Պէյտրը Քուր (Աւստրալիա) Ֆէ. Տէ. ժէօ 55 կէտ

Խումբերու դասաւորում.-

- 1.- Մի. Էս. Մի. Թիլպալի 40 ժամ 36' 10"
- 2.- Քոֆիտիս 3" ուշ
- 3.- Եու. Էս. Փոսթալ Սըրվիս 3" ուշ
- 4.- Քէլմէ-Քոսթա Պլանքա 5" ուշ
- 5.- Օնսէ-Էրոսքի 9" ուշ

ԱԼԻՌԻ ՍԻՍԷ ՄԻԱՅԱԽ ՊԻՐՄԻՆԿ ՀԷՄ ՍԻԹԻԻ

Սեպտեմբրի ֆուտբոլի ազգային խումբին խմբապետ Ալիւ Սիսէ երեկ լքեց իր ակումբը՝ Փարիզ Սեն Տերմէյը եւ փոխան 2,3 միլիոն տոլարի միացուելու 2002 եղանակին ասարտին բարձրագույն դասակարգ բարձրացած Պիրմինիէմ Սիթիին: 26 տարեկան Սիսէ, որ միջնապահի պաշտօնն ալ կրնայ կատարել, իր երկրին ֆուտբոլի ազգային խումբին հետ 2002ի Մոնտիալին յաջողեցաւ հասնիլ քառորդ արտական հանգրուան: Անիկա իր առաջին անակնկալ կատարած էր Մոնտիալի բացման մրցումին, 1-0 արդիւնքով պարտութեան մատնելով տիտղոսակիր Ֆրանսան: Շարքապակիքին, ան բժշկական քննութիւններու ենթարկուելէ ետք, չորս տարուան պայմանագրութեամբ ստորագրեց անգլիական խումբին հետ, փոխան՝ 4,6

միլիոն տոլարի: Անոր փոխանցման համար վճարուած ընդհանուրը շուրջ 7 միլիոն տոլարին մասին անոր պահանջով, Պիրմինիէմի մարզիչ Սթիւ Պրու քսաւ, որ նուազ է, որ անոր այդ փոխանցումը յաջողած է իրագործել, որովհետեւ ան իսկապէս, որ բացառիկ յաղթանակներով օժտուած մարզիկ մըն է:

Այսպիսով, ան կը դառնայ երկրորդ մարզիկը, որ ամրան այս արձակուրդին կը միանայ Պիրմինիէմի կապակցի միջնապահ Ռոպի Մէվընը Լալաթը Սիթիի փոխանցումէն ետք (փոխան՝ 3 միլիոն տոլարի): Այսպիսով, ան կը դառնայ այս արձակուրդին կը միանայ Պիրմինիէմի կապակցի միջնապահ Ռոպի Մէվընը Լալաթը Սիթիի փոխանցումէն ետք (փոխան՝ 3 միլիոն տոլարի): Այսպիսով, ան կը դառնայ այս արձակուրդին կը միանայ Պիրմինիէմի կապակցի միջնապահ Ռոպի Մէվընը Լալաթը Սիթիի փոխանցումէն ետք (փոխան՝ 3 միլիոն տոլարի):

Նշենք, թէ Սիսէ, ֆուտբոլիստի իր ասպարէզը սկսաւ 1995ին, մաս կապուելով Լիլի: Ապա ան միացաւ Սթոասին (1997ին) եւ Փարիզ Սեն Տերմէյի (1998ին): Ան 2001ին փոխ տրուեցաւ Մոնսիէլիին:

ՄԵԹՅԻԹ ԳԷՊԻ Ա. Մ. ԷՄԻՐՈՒԹԻՆՆԵՐ՝



Պրիւս Մեթցի

Սեպտեմբրի ֆուտբոլի ազգային խումբին մարզիչ Պրիւս Մեթցի, որ 2002ի Մոնտիալին իր կապակց հասցուց քառորդ արտական հանգրուան, այժմ կը սերտէ Արաբական Միացեալ Էմիրութիւններին իրեն ներկայացած մէկ առաջարկը, որ կու գայ Այն խումբին: Այն նախագահը՝ Մոհամետ Խալիֆա Սաթար Ռոմալի Սաթար Տապիլի մէջ թղթակցներուն հետ իր ունեցած հարցադրոյցին ընթացքին, ակնարկելով անոր փոխանցման մասին, կ'ըսէ, թէ գրեթէ ամէն ինչ կատարուած է, սակայն ոչինչ ամբողջացած է տակաւին: Անոր պայմանագրութիւնը տակաւին չէ ստորագրուած Մեմէլի ֆուտբոլի ֆետերասիոնին հետ: Հետեւաբար, բառ ՖԻՖԱ-ի օրէնքներուն, ան պէտք է սախ իր հարցերը դասաւորէ փորկեան խումբին հետ, ապա իրեն ներկայացած առաջարկին գծով որոշում տայ:

ՎԵՆԸՊԸԼԸ ՆՇԱՆԱԿՈՒԵՑԱԽ ԼԻՏԻ ՄԱՐԶԻԸ

Անգլիոյ ֆուտբոլի ազգային խումբին նախկին մարզիչ Ռոբի Վենըպըլը շարքաակցիքին նշանակուեցաւ Լիթւանիայի մարզիչ՝ երկու տարուան պայմանագրութեամբ ստորագրելով:

59 տարեկան Վենըպըլը կը յաջորդէ Տէյվիտ Օլքրիի, որ անցեղայն Յունիս 27ին պաշտօնակալ եղաւ: Լիթւանիայի պաշտօնին համար նկատի առնուած թեկնածուներն են՝ Միտլայնքի մարզիչ Սթիւ Մաքքալարը եւ Սելթիքի մարզիչ Մարքի Օնլի: Անոնք սակայն մերժուած են առաջարկը՝ ըսելով, որ կ'ուզեն իրենց ակումբներուն հետ մնալ:

Վենըպըլը, որ Եւրո-96ի ֆուտբոլի մրցաշարքին Անգլիան հասցուցած էր կիսաարտական հանգրուան, շատերու կարծիքով կը կարծուէր ըլլալ Քեմիս Բիլլիքի յաջորդը, որ Եւրո-2000ի ֆուտբոլի մրցաշարքին ետք, հետագայ կը պայքարէ իտուան մը: Սակայն Անգլիոյ ֆուտբոլի ֆետերասիոնը Քիլկընի յաջորդը նշանակած էր շուէտացի Սլէյն Կորան Էրիքսընը:

Լիթւանիայի Փիթըր Ռիտուտեյլի համաձայն, Վենըպըլի մարզիչ նշանակումը պատճառ պիտի դառնայ, որ յետապահ Ռիօ Ֆերտիսան չ'հեռանայ ակումբէն, հակառակ անոր, որ Մանչեսթըր Եունայթըտ ալ մարզիչին ստորագրութիւնը ձեռք ձգելու համար կ'առաջարկէ 54 միլիոն տոլար:

Ռիտուտեյլ քսաւ, թէ այսպիսով վերջ մը կը դրուի Ֆերտիսանի փոխանցման մասին շրջան ընդ տարածախնդրութիւններուն «եւ այժմ վստահ եմք, որ իրեն կ'ուզուի պիտի չ'զբաղի Ֆերտիսանով, որովհետեւ ան ծախու չ'է»:

Հակառակ անոր, որ Վենըպըլը մաս կապած է շատ մը ակումբներու, որոնց կարգին՝ Քրիսթալ Փալան, Քուրնի Փարք Ռէյնըրթ, Պարսելրնա, Միտլայնքը եւ Աւստրալիոյ ֆուտբոլի ազգային խումբ, ան այրքան ալ շատ տիտղոսի չ'է կրցած տիրանալ անոնց հետ: Սակայն հակառակ այս իրողութեան, ան Անգլիոյ ֆուտբոլի մէջ կը մնայ ամէնէն անչի ժողովրդականութիւն վայելող մարզիչներէն մէկը:

Տէլէընիէի մէջ (Անգլիա) ծնած Վենըպըլը, ֆուտբոլիստի իր ասպարէզը սկսած է Չեխիի հետ:

ՎԵՐԱՍՈՒՏ ՀԱՅ ՍԿԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՇԱՄԼԵԱՆ ԹԱԹԻԿԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ՊՈՒՐԸ ՇԱՄՈՒՄ

Հայ Աւետարանական Շամլեան Թաթիկեան Երկրորդական վարժարանի հոգաբարձուքինը ուրախութեամբ կը յայտարարէ, թէ 2002 - 2003 տաւերջը անց վերանուստի վարժարանը կը վերաբանայ Երկրորդական Գ. դասարանը (Bacc. Life Science):

Արձանագրութիւն Արձանագրութեանը պիտի սկսին Երկուշաբթի, 2 Սեպտեմբեր 2002ին: Արձանագրութեան համար վարժարանի գրասենեակը բաց պիտի ըլլայ Երկուշաբթի Ընթացք՝ առաւոտեան ժամը 9:00ն 12:00:

Վերաբանութեան Վերաբանութեան կարօտ աշակերտներ պարտին ներկայանալ վարժարան 11 - 13 Սեպտեմբեր առաւոտեան ժամը 9:00ին:

Վերաձուտ Ա. «Պրեօէ» եւ Երկ. Գ. կարգի աշակերտներ իրենց դասընթացը կը սկսին Երկուշաբթի, 16 Սեպտեմբեր առաւոտեան ժամը 8:00ին:

Բ. Մնացեալ բոլոր կարգերու աշակերտներ իրենց դասընթացը կը սկսին Երկուշաբթի, 30 Սեպտեմբեր առաւոտեան ժամը 7:30ին:

Գրասենեակի ժամը Ա. Յունիս ամսուան ընթացքին գրասենեակը բաց պիտի ըլլայ Երկուշաբթի Ընթացք, առաւոտեան ժամը 9:00ն 12:00:

Բ. Օգոստոս ամսուան ընթացքին գրասենեակը բաց պիտի ըլլայ ամէն Երեքշաբթի առաւոտեան ժամը 9:00ն 12:00:

